




ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

ՄԱՔԵՆՈՑԱՑ ՄԵԾ ԵՎ ՀՌԶԱԿԱՎՈՐ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Մաքենացիների սուրբ ուխտը իր ժամանակին
Հայաստանի պարծանքն էր»
(Մ. Կաղանկատվացի, «Պատմություն», Երևան,
1989, էջ 245)

Պատմական Հայաստանի Սյունյաց նահանգում, այժմյան Սովետական Հայաստանի Մարտունու շրջանում, Յարփուզլու և Չիչակլու գյուղերի մոտ, ի շարս այլ պատմական վանքերի, կրոնական մշակութային մեծահամբավ կենտրոն է հանդիսացել մաքենացիների ա. ուխտը:

Մաքենոցաց վանքի մասին մեր պատմիչները հետևյալ տեղեկություններն են հաղորդում.

Մխիթար Այրիվանեցի պատմիչը (ԺԳ դար) 696 թվականին հիշատակելով մաքենացոց վանքը, գրում է. «Հայր Սողոմոն արար գտօնականն ի Մաքենիս»¹:

«Աղվանքի կաթողիկոս Միքայելը իրեն ենթակա եկեղեցու ուխտի ժողով է անում և իր մոտ է կանչում հոշակավոր Սողոմոնին, որ մաքենացիների սուրբ ուխտի ա-

ռաջնորդն էր, իսկ այդ ուխտը իր ժամանակին Հայաստանի պարծանքն էր»²:

«Նշանատր դէպս ազգիս նշանակէ համառոտի ժամանակագիր ոմն. «ՄԼԷ թուին՝ տէր Սողոմոն շինէ զՄաքենիս» այն է ստուգիս ամ տեառն 788»³:

Այս վանքի սկզբնավորության մասին Սյունյաց երկրի գիտակ պատմիչ Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյանը (ԺԳ դար) հաղորդում է 9-րդ դարի կեսին Սյունյաց Գրիգոր Բ Սուփան իշխանի շինարարությունների մասին հետևյալը.

«Դարձեալ շինէ և գերկնաճեմ խմբաբանն ի հրաշագան մեմարանին. ի փառաբնակ ուխտն Մաքենոցաց, զգմբէթայարկ եկեղեցին լանուն սրբոյ Աստուածածնին, և պարսպէ վիմօք. և այլ բազում շինուածս յօրինեալ զարդարէ զնա անխնայ զանձիք

² Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղվանից աշխարհի», Երևան, 1989, էջ 245:

³ Հ. Ղ. Այիշան, «Սիսական», Տեղագրություն Սիսկանց Աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 67 (նկատ այստե՝ Սիսական):

¹ Մխիթար Այրիվանեցու «Պատմություն հայոց» ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 51:

ս փարթամացուցանե՞ բազում ընչիւք. նա և գեղօք և ագարակօք և ալգեստակօք ի Գառնի և լեռնաւն և յալ տեղիս»⁴:

Սիմեոն կաթողիկոս Երևանցի (1763—1780) տւյն վանքի մասին խոսելիս հաղորդում է այլ մանրամասնություններ⁵:

Մաքենցաց վանքի շինության մասին կա նաև հետևյալ հիշատակությունը. «Մաքենիս: Ի Գեղարքունի գաւառի Սիմեաց. ծաղկեալ եօթերորդ դարու. յորմէ յայտ է թէ շինութիւն նորա յառաջ է քան զայս դար»⁶:

Մաքենցաց վանքի ներկա շէնքերը բաղկացած են երկու խմբից. տաճարը՝ պարսկական բակի ներսում, մյուս շէնքը՝ պարսպից դուրս:

Բակի ներսում է ս. Աստվածածնի գլխավոր տաճարը, ներքուստ խաչաձև, գլխաձև, անկյուններում ունի խորաններ: Կանգուն է, պատերի վրա երևում են բազմաթիվ նորոգումների հետքեր: Արևմտյան կողմում հետագայում ավելացրած է եղել հասարակ գավիթ, որի պատերի կեսն են պահպանվել: Այստեղ եղել է նաև թաղական մատուռ, որի ծածկը այժմ թափված է: Բակի մեջ մնում են բազմաթիվ խոցերի և այլ շինվածքների ավերակներ: Պարսպից դուրս, առաջին խմբից հագիվ 20—30 մետր դեպի հարավ-արևելք, կանգուն մնում են իրար կից երկու թաղական եկեղեցիներ: Սրանք ևս հին են, սակայն նորոգման հետքեր չունեն, ինչպես նաև ոչ մի արձանագրություն: Պարսպից դուրս, հարավային կողմում, հավանաբար եղել է գերեզմանատուն, որ այժմ մի քանի խաչքարեր կան միայն⁷:

Մաքենցաց վանքի պատմությանը անցյալում զբաղվել են ս. Էջմիածնի միաբանության անդամներից Հովհ. Ծախխաթունյան, Ս. Զալալյան և Մ. Սմբատյան սրբազանները, ինչպես նաև Բ. Ղ. Ալիշանը, Բ. Մ. Չամչյանը և ուրիշներ:

Ծախխաթունյան սրբազանը վանքի մա-

սին գրում է. «Մաքենցաց մեմաստան... ի վայելույ վայրի... Տաճարն խաչաձև կառուցեալ կայ ի միջին տեղոյ պարսպին յանուն սրբոհոյ Աստուածածնի. որ և կոչի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿԵՂԱՄԱՅ. և է առանց սեան միջակ ձեռութեամբ, բարձրակամար, և ունի կաթողիկէ նույն գէս քարաշէն, զմի սեղանատեղի սրբազան խորհրդոյն և զմի դուռն ի հարաւոյ. քարինք շինուածոց տաճարիս հանգոյն եկեղեցոյն վանականո ոչ այնքան հարթ յղեալ»⁸:

Սարգիս Զալալյանը գրում է տւյն վանքի մասին. «Ղզլքիխայ է գիւղ յայնանիստ՝ շինեալ ի լանջաւ կողմն Գեղամայ լեռին... Աստ է հոշակատր սուրբ ուխտըն Մաքենից շինեալ յանուն սուրբ Աստուածածնայ խաչաձև և կիսաբոլոր. վաշտացեալ հրաշալի գմբէթաւ. ունի զինն ստանձին սեղան սրբազան խորհրդոյ. երկայնութիւն տաճարին քան և ութ կանգուն. և լայնութիւնն քան և չորս... Զառաջեան ունի զգաւթ շինեալ ի հասարակ քարանց, որոյ երկայնութիւնն 20 կանգուն և լայնութիւնն 18: Կից նմին ի կողմն արեւելից է սագաշէն եկեղեցի. որոյ երկայնութիւն 16 կանգուն և լայնութիւն 8: Ծորքք զորովք գոն բազմաթիւ սենեակք միաբանից: Ունի ընդարձակ սեղանատուն: Արտաքոյ պարսպի տրա գոն այլ ևս երկու սագաշէն եկեղեցիք. միոյն երկայնութիւնն 14 կանգուն, և միոյն 16»⁹:

ՄԱՔԵՆՈՑԱՅ ՎԱՆՔԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաքենցաց վանքում գոյություն են ունեցել 13 արձանագրություններ, որոնցից 5-ը հրատարակվել են Ստեփանոս արքեպ. Օրբելյանի¹⁰, Հովհաննես եպս. Ծախխա-

⁴ «Պատմութիւն նահանգին Սիսական» Արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիմեաց, Թիֆլիս, 1910, էջ 179 (նկտ պատ՝ Ստ. արքեպ. Օրբելյան, «Պատմություն»):

⁵ Սիմեոն կաթողիկոս Երևանցի, «Զամբո», Վաղարշապատ, 1878, էջ 283:

⁶ Հ. Դուկաս վարդապետ Ինճինեան, «Հնավատութիւն Հայաստանեայց Աշխարհի», Վենետիկ, 1835, Բ. Բ, էջ 212:

⁷ ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ, պրակ 4, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 289 (նկտ պատ՝ «Դիվան հայ վիմագրության»):

⁸ «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» Աշխատասիրութեամբ Յովհաննես եպիսկոպոսի Ծախխաթունեանց Ծախխաթոյ միաբանի արքայ Էջմիածնի», հատոր երկրորդ, Էջմիածին, 1842, էջ 252 (նկտ պատ՝ Հովհ. եպս. Ծախխաթունյան):

⁹ Սարգիս վարդապետ Զալալյան, «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան», մասն Բ, Տիֆլիս, 1850, էջ 116: (Հետ պատ՝ Զալալյան): Զալալյանը պնդում է՝ վանքիս վերագրելով «զինն ստանձին սեղան սրբազան խորհրդոյ», մինչդեռ ինչպես բոլոր նկարագրողները, այնպես և մենք տեսել ենք, որ մի սեղան ունի վանքը:

¹⁰ Ստեփաննոս արքեպ. Օրբելյան, «Պատմություն», էջ 179—181:

թունյան¹¹, Սարգիս եպս. Զալալյան¹²,
Ռ. Ղ. Ալիշան¹³, Մեարոպ արքեպ. Սմբատ-
յան¹⁴, Ե. Լալալյան¹⁵ գործերում:

Հրատարակված սույն արձանագրու-
թյուններից բացի նորագույն ալլ արձանա-
գրություններ ևս հանդերձ լուսանկարնե-
րով վերջերս հրատարակեց հանգուցյալ
հմուտ վիմագրագետ Սեդրակ Գևորգի
Բարխուդարյանը՝ «Դիվան ՀԱՅ ՎԻՄԱ-
ԳՐՈՒԹՅԱՆ», պրակ 4, «Գեղարքունի»
Կամոյի, Մարտունու և Վարդգեսի շըր-
ջաններին վերաբերող գրքում:

Մենք ևս ամբողջությամբ սույն հոդվա-
ծում վերահրատարակում ենք Մաքենցաց
վանքի 13 արձանագրությունները՝ դրանք
կրկին ստուգելով տեղում՝ Մաքենցաց
վանքում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1. Փորա-
գրված է եղել սկզբում արևելյան պատի
վրա, արտաքուստ, այժմ մի քանի քարեր
են մնացել իրենց հին տեղում. մնացած-
ները խախտվել են ու դրվել պատահա-
կանորեն: Գրված է եղել 9-րդ դարի վեր-
ջերին: Հրատարակում ենք Օրբելյանի և
Բարխուդարյանի հետ համեմատելով այն.
«ԿԱՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՄ ՍՈՒՓԱՆ՝
ՍԻՆԵԱՅ ԻԾԵԱՆ, ԾԻՆԵՑԻ ԶՄԱՔԵ-
ՆՈՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԱՆԽԱՅԱՅԱՐ
ԶԱՐԴԱՐԵՑԻ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՔ
ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱԻՔ
ԵՒ ԵՏՈՒ ԶՍԵՓԱԿԱՆ ՏԵՂԵՄԵՐ Ի ՍԱ,
ՈՐ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՍՏ-
ՈՒԱԾԱԾԻՆ ԱՍԻ, ԻԻՐ ԱՄԵՆԱՅՆ
ՍԱՀՄԱՆԱԻՔ, ԼԵՐԱՄԲ ԵՒ ԴԱԾՏԻՒ. ԵՒ
ԵՏՈՒ ՈՐՍ ԶԿԱՆՑ ԶՔՈՂԱԾԷՆ՝ ՍԵՂԱ-
ՆՈՅՆ, ԵՒ :2: (700) ԴՐԱՄ Ի ԴԵՂԶԱ-
ՆԱԳԵՏՈՅ ՂԱՊԱԼԷՆ, :Մ: (200) ԴՐԱՄ
Ի ԿԱԹԿԱՅ, :ՅԾ: (350) ՅԱՆՄԵՆԷՆ,
ՈՐ ԼԻՆԻ :ՌՄԾ: (1250) ԴՐԱՄ: ԵՒ ԵՏՈՒ
:Ե: (5) ԿՈՒՂՊԱԿՍ ՅԱՆԻ ԵՒ :Ե: (5)
ԱՅԳԻ ՅԵՐԵՒԱՆ ԵՒ :Ծ: (500) ԱՌՈՒ
ԱՅԳԻ Ի ԳԻՒՂԱՔԱՂԱՔՆ ԳԱՌԵՒ, ԵՒ
:Բ: (2) ԱՅԳԻ ՅԵՂԵԳԻՍ. ԵՒ ԶԱՄԵ-
ՆԱՅՆ ՊԷՏՍ ՍՈՒՐԲ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ
ԼՅԻ ԱՌԱՏԱՊԷՍ ԵՒ ՓԱՐԹԱՄԱՑՈՒՑԻ

ՆԵՐՔՈՅ ԵՒ ԱՐՏԱՔՈՅ. ԵՏՈՒ ԵՒ ԶՈ-
ԼԻՐՍ ԵԶԱՆՑ ԵՒ ԶՈԿՍ ԶՈՒԱՐԱԿԱՅ
ԵՒ ԱՆԴԵԱՅՍ ԵՒ ՀԱՆՏՍ ՈՉԽԱՐԱՅ:
ԵՒ ԱՐԴ ՄԱՂԹԵՄՔ ԶԱՄԵՆԱՅՆ ԱՍՏ-
ՈՒԱԾԱՑԵԼՈՅ ՍՈՒՐԲ ՈՒՆՏԻԴ ՊԱԾ-
ՏԱԽԵԱՅՍԴ, ՈՐՈՒՄ ԱՍՏՈՒԱԾ Է
ՄԻԶՆՈՐԴ, ԿԱՏԱՐԵԼ ՎԱՍՆ ՄԵՂՈՒ-
ՑԵԱԼ ՀՈԳԻՈՅ՝ ԶԵՐԿՈՒ ՔԱՌԱՍՈՒՆ-
ՍԸՆ ՏԵՐՈՒՆԻ ՊԱՏԱՐԱԳ ԻՆԶ. ԵՒ ԱՆ-
ԽԱՓԱՆ ԵՐԳԵԼ ԶԵՐԵԿՈՅԻՆ ՍԱՂՄՈ-
ՍԸՆ՝ ԶՆԵՂՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆ ԵՒ ԶԱ-
ՌԱՒԱՑՈՒՆ ՍԱՂՄՈՍՆ, ԶՈՐ ԿԱՐ-
ԳԵԱԼ ԵՄ ՅԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔ: ԵՒ
ՏՐ ՅՈՎՀԱՆԷՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ,
Ի ՏԱՆԷՍ ՄԻ ԻԾԽԵՍՅԷ ԴԱՏ ԿԱՄ
ՓԱՅՔԱՐ ՀԱՆԵԼ. ԵՒ ՄԻ ՅԻՄ ՈՐԴԵԱՅ
ԿԱՄ Ի ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ. ԱՅԼ ՈՐ ԸՆ-
ԾԱՅԻՍ ՀԱԿԱՌԱԿԷ ԿԱՄ ՀԱՆԵԼ ԶԱ-
ՆԱՅ ԵՒ ՈՐ ՀԱԿԱՌԱԿ ԱՆՈՒԱՆԵՍՅԻ՝
ՆԶՈՎՍ ԶԱՐԱԶԱՐ ԸՆԿԱՆՑԻ ՅԱՍՏՈՒ-
ԾՈՅ ԵՒ ՀԱՄԵՆԱՅՆ ԱԹՈՌԱԿԱԼԱՅ
ՍՐԱՐՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ԵՒ ՄԱՍՆ ԸՆԴ
ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆԶԻՆ ԵՂԻՑԻ: ԵՒ ԴԱՐ-
ԶԵԱԼ ԽԱԽՄԻՄ ԸՆԴ ԶԵԶ. ԱՌԱՋՆՈՐԴ
ԵՒ ԿՐԱԽԱՒՈՐՔ. ՎԱՆԱՅՍ, ՀԱՍՏԱ-
ՏՈՒՆ ԿԱԼ ՄԻՆԶ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍ-
ՏՈՍԻ. ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԵԼՆ ԵՒ ՍԱՂՄՈ-
ՍԵԼՆ ՎԱՍՆ ԻՄ ԱՆԽԱՓԱՆ ԵՂԻՑԻ.
ԵՒ ԵԹԷ ՈՔ ԾՈՒԼԱՍՅԻ Ի ՔԱՌԱՍՆԵԱԿ
ԱԽՈՒՐՍԴ ԱՄ ՅԱՄԷ ԿԱՏԱՐԵԼ ԶՄԵՂ-
ՍԱՔԱԻԻԶ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՅԵՏ
ԵԼԻՑ ԻՄՈՑ Ի ԿԵՆՑԱՂՈՅՍ, Ի ՔՐԻՍ-
ՏՈՍԷ ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ, ԵՒ ՄԱՍՆ ԸՆԴ
ՄԻՄՈՆԻ ԿԱԽԱՐԴԻ ԸՆԿԱՆՑԻ, ԵՒ Ի
ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ:

ԾԻՆԵՑԻ ԵՒ ԶԵԿԵՂԵՑԻՆ Ի ԳԻՒՂԱ-
ՔԱՂԱՔԻՆ ԿՈԹԱՅ, ԵՒ Ի ՆՄԱ :Ը: (8)
ՍԵՆԵԱԿ. ԵՒ ԱՐԱՐԻ ՊԱՏԻ Ի ՏԱՆ
ՏԵԱՌՆ, ԶՈՐ ԾԻՆԵՑԱՔ. ԵՒ ԶԱՍՏՈՒԱ-
ԾԱԾԻՆՆ ՔԱՀԱՆԱՅՔՆ ԱԶԱՏ ԱՐԱ-
ՐԱՔ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՐՔՈՒՆԻ ԶԱՐԷ.
ԸՆԴ ՆՈՍԻՆ ԵՒ ԶԱՅԼ ՊԱԾՏԱԽԵԱՅՍ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՐՔ Ի ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ
ԿԱՐԳԷ:¹⁶

Ստ. արքեպ. Օրբելյանին իր «Պատմու-
թյան» մեջ սույն արձանագրությունը տա-
լուց հետո, ավելացնում է. «Ահա այս իսկ
էր արձան մաքենցաց, բայց վասն հնու-
թեանն և խախտելոյ քարանցն ոչ կարա-
ցաք գրովանդակն իմանալ. այլ բազում
բանք և տուրք իշխանացն պակասին. զայս

¹¹ Հովհաննես եպս. Ծախաթունյան, Ռ. Բ, էջ 252—253:

¹² Սարգիս եպս. Զալալյան, Ռ. Բ, էջ 118:

¹³ Լ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 68—69:

¹⁴ Մեարոպ արքեպիսկոպոս Սմբատյան, «Տեղե-
կագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի», Վաղար-
շապատ, 1896, էջ 570—571, 578—579 (հետ սլաւո՝
Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի»):

¹⁵ Ե. Լալալյան, «Ազգագրական հանդես», գիրք
24, էջ 56:

¹⁶ Ստեփաննոս արքեպ. Օրբելյան, «Պատմու-
թյուն», էջ 179—181: Ալիշան «Սիսական», էջ 68—
69: Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի», էջ
578—579: Ս. Գ. Բարխուդարյան «Դիվան հայ վի-
մագրության», պրակ 4, էջ 290—291:

փոքր ի շատե՛ եղաք զի մի բնափն ջնջեալ կորիցէ յիշատակ անցաւ. և այս ամենայն գործեալ եղև յ300 թուականէն մինչև յ350ն¹⁷:

Այս հարցի մասին Հովհաննէս եպս. Ծախաթունցանք ևս վկայում է հետևյալը. «2եղև հնար մեզ գտանել զարձանագրութիւնն ի Գրիգոր Սուփան իշխանէ Սիւնեաց՝ զոր յառաջ բերէ հայր Ղուկաս Իննցի՞նէան ի ստորագրութեան հին Հայաստանի՝ թէ և այն ևս թերի ըստ գրուածոցն Ստեփաննոսի Օրբելեան. և գուցէ ծածկեալ էր այն ընդ որմովքն՝ որք կից են որոնց տաճարին ի չորից կողմանց»¹⁸:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 2. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատի վերին մասում, պատուհանի շուրջը, արտաքուստ, 5 տող. ԾՆՈՐՀՕՔՆ ԱՅ. ԵՍ ՄԷԼԻՔ ՄԷԼԻՔԲԷԿՍ, ՈՐԴԻ ՄԵԾԻ ՊԱՐՈՒՆ ԱԾԱՊՈՒՆ, ԻԾԽՈՂ ՏԱՆՍ ԳԵՂԱՄԱՅ, ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻՍ ԻԾԱՏԱԿ ԻՄ ԵՒ ԶԻՄՈՑՆ. ԱՄԷՆ ՅԻԾԵՑԷՔ ՆԻԱԶՆ ՎԵՐԱԿԱՅՈՒՆ¹⁹:

Բարխուդարյանը տույն արձանագրության վերաբերյալ տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «ԱԾԱՊՈՎ անունը Աստվածապովի կրճատ ձևն է: Մեղիք Մեղիքբեկը իշխել է 16-րդ դարի երկրորդ կեսին. հիշատակված է մինչև 1578 թվականը»²⁰:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 3. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցու հարավային պատին՝ արտաքուստ, վերևում փորագրված երկու խաչ. 1 տող. «ԱՅ ՈՂՈՐՄԻ ԱՆՅԻԾԱՏԱԿ ՄԱՆՈՒԷԼԻՆ»: Ս. Գ. Բարխուդարյանն այս արձանագրությունը համարում է 17-րդ դարի²¹:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 4. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցու հարավային պատին, արտաքուստ, թերի թողնված 1 տող. «Աժ ողորմի...»: Համարվում է 17-րդ դարի²²:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 5. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ հարավային պա-

տի արևմտյան մասում, արտաքուստ (հետագայում հարմարեցված ալանդատան պատին), 11 տող., «ԿԱՄԱԽՆ ԱՅ. ՈՐ ՄԻԻՆԵԱՑ ՍՈՒՓԱՆ ԻԾԽԱՆ ԾԻՆԵՑ ՄԱՔԷՆՈՒՑ ԵԿԵՂԵՑԻՍ Ի :ԳԺ: (300) ԹՎԻՆ: ՄԻՆ 2 Ի :ՌԺԺԵ: (1666) ԹՎԻՆ ԵՍ ԱՌԱԶՆՈՐԴ ՍԲ. ՌԻՆՏԻՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ ԽԱԶԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ՈՐԴԻ ԳՈՂՈՎ ՅԱԿՈԲԱՅ, ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԻ ԵՒ ՊԱՅՑԱՌԱՑՈՒՑԻ, Ի ԺԱՄԱՆԱԿԸՍ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԷ. ՏՆ ՅԱԿՈԲԱՅ, ԵՒ ՄԻԱԲԱՆՔ ՍԲ. ՎԱՆԱՑՍ ԶՏՐ. ՊԱՐԱՄԱՆ, ԶՏՐ. ԳՐԻԳՈՐՆ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳՈՒՆՔ ԳՐԻԳՈՐՆ, ՂԱԶԱՐՆ ԵՒ ՍՏԷՓԱՆՈՍՆ, ՏՆՏԵՍ ՍԱՐՈՒԽԱՆ ՅԻԾԵՑԷՔ Ի ՔՍ. ԱԾ. ԵՒ ՈՐՔ ՅԻԾԱՏԱԿԷ ԶՄԵԶ՝ ՅԻԾԱՏԱԿ ՆՈՑԱ ԽԱՂԱՂՈՒԹՔ. ՊԱՀԵՑԷ ԱՄԵՆԵՑՈՒՆ ՀԱՅՐ»²³:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 6. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցու հյուսիսային պատի վերին մասում, քիվի տակ, արտաքուստ, 1 տող. «ՅԻԾԵՑԷՔ Ի ՔՍ ՄԱԶՐԵՑԻ ԽՈՏԱ ՍԱՐԳԻՍՆ, ՈՐ ԵՏ ՎԱՍՆ ԾԻՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՑԱ :Բ: (2) ԹՈՒՄԱՆ»: Համարվում է 17-րդ դարի գործ²⁴:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 7. ԽԱԶՔԱՐ, օգտագործված է գավթի հյուսիսային մուտքին որպես կողքի բար. ճակատին երկու կիսեղծ տող. «ԵՍ ՆԱՍԻՊՍ ԿԱՆԿԵՑԻ ՍԲ. ԽԱԶՍ ՀՈԳՈՑՆ ԻՄՈՑ...»: Համարվում է 15—16-րդ դարերի²⁵:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 8. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին՝ գեղագիր 13 տող. «ԵՍ ԱԻԵՑԻՍ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԱՌԱԶՆՈՐԴ ՍԲ. ԱԾԱԾԻՆ ՀԱՆԳՈՒՑԻ ՏԱՊԱՆԱ ՀՕՐՆ ԻՄ ՊԱՐՈՒՆ ՆԻԱԶՆ, ՈՐԴԻ ԻՍԱՅՊԷԿԻՆ, ԹՈՐՆ ՊԱՐՕՆ ՄԷԼԻՔ ԾԱՀՆԱԶԱՐԻՆ, ԹՎ. :ՌԺՄԲ: 1693»²⁶:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՆՁ 9. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որն ալժմ չկա, եղել է՝

¹⁷ Ստեփաննոս արքեպ. Օրբելյան, «Պատմություն», էջ 181:

¹⁸ Հովհաննէս եպս. Ծախաթունցան, հ. Բ, էջ 252:

¹⁹ Հովհաննէս եպս. Ծախաթունցան, հ. Բ, էջ 252—253: Զալալյան, հ. Բ, էջ 118: Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 69: Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 571: Ս. Գ. Բարխուդարյան, «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, էջ 291:

²⁰ Ս. Գ. Բարխուդարյան, «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, էջ 291:

²¹ «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, էջ 291:

²² Նույն տեղում:

²³ Ծախաթունցան, հ. Բ, էջ 252: Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 69: Զալալյան, հ. Բ, էջ 118: Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 570—571: Ե. Լալալյան, «Ազգագրական հանդես», № 24, էջ 56: «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, էջ 292:

²⁴ «Դիվան հայ վիմագրության», էջ 292: Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 571:

²⁵ «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, էջ 292:

²⁶ Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 571: Ե. Լալալյան, «Ազգագրական հանդես», № 24, էջ 56: Ս. Գ. Բարխուդարյան, «Դիվան հայ վիմագրության», պրակ 4, էջ 293:

«ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԵՂԻԻՆ ՈՐԴԻ ՊԱ-
ՊԱՆԱՆԻՆ, ՈՐ Ի ԱՆԱԻՐԻՆԱՅ ՍՊԱ-
ՆԵՑԱԻ ԹՎ. :ՌԺԽԲ: (1693)»²⁷:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10. ԽԱԶ-
ՔԱՐ, կանգնած է վանքից հարավ, մոտ
20 մետր հեռու, բանջարանոցի հասարակ
պատի մեջ, բայց իր նախնական տեղում,
ճակատին և խորանի շուրջը՝ 2 տող. «ԱՍ-
ՏՈՒԾՈՎ ԿԱՆԳՆԵՑԱԻ ԽԱԶՍ ԹՎ. :Զ:
(1451)»²⁸:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11. ԽԱԶ-
ՔԱՐ, կից նախորդին հյուսիսից, ճակա-
տին՝ 2 տող. «ԵՍ ԴԱԻԻԹՍ ԿԱՆԿՆԵՑԻ
ՍԲ. ԽԱԶՍ»²⁹:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 12. ԽԱԶ-
ՔԱՐ, կանգնած է պարսպից դուրս, թա-
ղածածկ եկեղեցու հարավային պատի
տակ, շրջանակներին և ստորին մասում՝
16 տող. «ԿԱՄԱԻՆ ԱՅ. ԵՍ ՎԱՐԴ ԶԱ-
ՀԱՆԱՅ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ ՓՐԿՈՒԹԻ
ՀԱԻՐ ԻՄՈՅ ԻՆՈՒՆ ԵՒ ՄԱԻՐՆ ԻՄ
ԿՈՒԼՋՀԱՆԻ, ԴԱՍՏԱԿՈՒԼԻՆ, ՄԻԼԻ-
ԹՈՒԽՏԻՆ. ԹՎ. :ԶԿԴ: (1515)»³⁰:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 13. ԽԱԶ-
ՔԱՐ, կից նախորդին հարավից, ճակա-
տին՝ կիսեղծ 3 տող. «ԱՍՏՈՒԾՈՎ ԵՍ
ՊԷՀՆԱՄՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ ՄԱԻՐՆ
ԻՄ ՇԱՀԱԼԱՄԻՆ ԹՎ. :ԶԿԴ: (1515)»³¹:

Մաքենոցաց վանքի արևելյան մասում,
պարիսպներից դուրս, գոյություն ունեն եր-
կու թաղակապ (սագաշեն) մատուռներ,
արդեն կիսավեր վիճակում, որոնց մասին
գրել են Ծախաթունյանը, նրան հետևելով՝
Ռ. Ղ. Ալիշանը. «Ի մեջ անդ պարսպին
յարևելակողմն տաճարին կայր առանձին
շինուած ինչ ի բարոք լղկեալ քարանց՝
որոյ որմունք ամբողջ, ծածկոյթ կամարին
կիսով չափ խոնարհեալ. և էր իբրև մատու-
ռն... Ընդ մեջ այս մատրան և տաճարին
գտանել ճանապարհ ջրոյ յարդարեալ ի
կոփածոյ մեծամեծ քարանց՝ զօրէն ճանա-
պարհին ջրոյ ի պարտիզի անդ կաթողի-
կոսարանին Աթոռոյ Էջմիածնի. թերևս եր-
բեմն ընդ այս ճանապարհ խոտորեցուցեալ
զջոր գետակին փոքրիկ, և անդրէն հա-
նեալ ընդ պարիսպն՝ վերստին արկեալ են

ի ձորակ անդր, որպէս տեսանի և անցք
ջրոյ ի պարսպի անդ և արտաքոյ»³²:

«Են և այլ երկու սագաշեն եկեղեցիք ար-
տաքոյ պարսպի վանացն, մին հաւասար
մեծութեամբ արդ յիշեցելոյս, միսն փոք-
րագոյն էս (14 կանգ. երկայն., 6 լայն.).
թերևս ոմանք ի սոցանէ իցեն հնագոյն
քան ըզտաճարն ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ»³³:

Մաքենոցաց վանքը ժամանակին եղել է
պարսպապատ: Այն ճշգրտությամբ նկա-
րագրել է Ծախաթունյանը սրբազանը:
Սույն նկարագրության հետքերով մենք էլ
անձամբ տեսնելի անգամներ այցելել ենք՝
իր տեղում տեսնելով այդ պարիսպների
մնացորդները. «Պարիսպ մենաստանիս
բաւական բարձրութեամբ հիւսեալ ի հա-
սարակ քարանց. հարաւակողմանն կառու-
ցեալ կայ ի վերայ քարափան փոքր ձորա-
կի ջրոյն. իսկ միւս երեք կողմանն ի դիւր
գետնի. և ունի զմի և եթ տեղի դրան մերձ
յանկիւնն արևմտեան հարաւոյ: քազում
որմունք են ի պարսպի աստ շուրջ զտա-
ճարան՝ տանց, բնակութեանց և այլ հար-
կաւոր շինուածոց. և են հիւսուածք ի հա-
սարակ քարանց անհաստատ. և որպէս
երևի՝ սակա անբնակ մնալոյ յեկեղեցակա-
նաց, ի չուական ալլագգեաց անտի են հիւ-
սեալ այն որմունք և կցեալ իսկ ընդ տա-
ճարն. ուստի և չկարողացաք գտանել
զերևելի ինչ շիրիմ, կամ զնոյն իսկ զշի-
րիմն Ե-րդ Յովհաննու կաթողիկոսի»³⁴ հա-
յոյ՝ ուր վախճանեալ թաղեցաւ յամի 854,
այլ միայն մերձ յեկեղեցին յարևմտից նորա
են երկու մեծ շենք սեռեկաց բարձրորմն
կրով և քարամբք՝ որոց կամարայարկին
խոնարհեալ կան»³⁵:

Մեր պատմա-բանասիրական գրակա-
նության մեջ հանդիպում ենք այս մենաս-
տանի տարբեր անվանումների: Այսպես.
**Մաքենեաց, Մաքենոց, Մաքենոցաց, Մա-
քեստենից.** «Վանս Մաքենոցաց կամ Մա-
քենեաց. որ էր մենաստան մեծ... որոյ
միանձունք զգեւոյնն զմաքենիս. այսինքն
զատուիս մաքեաց. յոյր սակա և կոչիր
վանքն այն մաքենիք կամ մաքենոցք»³⁶:

Հ. Ղ. Ալիշանն այս հարցի վերաբերյալ
ալելի մանրամասն է գրում. «Մաքենոց
մենաստանն բազմադրուստ, հնագոյն
հռչակաւ քան զայլսն ամենայն յերկրիս

²⁷ Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի», էջ
571: Ե. Լալայան, «Ազգագրական հանդես», № 24,
էջ 56:

²⁸ Ս. Գ. Բաբխուդարյան, «Դիվան հայ վիմա-
գրության», պրակ 4, էջ 293:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Հովհ. եպս. Ծախաթունյան, Բ. Բ, էջ 253—
254:

³³ Հ. Ղ. Ալիշան, «Միսական», էջ 70:

³⁴ «Էջմիածին», 1971, № 7, էջ 25—26:

³⁵ Հովհ. եպս. Ծախաթունյան, Բ. Բ, էջ 253:

³⁶ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Բ. Բ,
Վնկևոսիկ, 1785, էջ 425—426:

Գեղամայ, յասպիսեաց միջի օտարաբնակ շենից՝ կիսականգուն կիսաւեր կայ յարեւելից հարաւոյ Չամուրլոյի և Գզըվանք գեղջ. (ըստ կարմրագոյն նիւթոյ քարանց շինուածոցն): Ի հնումն և գիւղն և վանքն նուիրն միով անուամբ կոչէին ՄԱՔԵՆՈՑ կամ ՄԱՔԵՆԵԱՑ կամ ՄԱՔԵՆՈՑԱՑ, այլ և ՄԱՔԵՍԵՆԻՑ, Ո՞, յումէ՝ առեալ զկոչումն՝ ոչ գիտեմ, զի սովորաբար վանքերն կամ անապատքն ի շինէն առնուն, իսկ վասն այսր տեղոյ ասի այդպէս կոչիլ մեհաստանին՝ ասկա մաքենի կամ օդենի նիւթոյ զգետնոց միանձանցն յորմէ ապա և գեղոյն: Մի ի հնագոյն կրօնաւորանցաց է սա, աներկբայ յառաջ քան զԸ դար. թերեւս զուգակից արարատեան հին վանորէիցրն³⁷: Այս անունը «ելած էր միաբանից հագուստէն, որ մաքեներու բուրդ ասուէ էր սովորաբար»³⁸:

Սկսյալ 19-րդ դարից «Այս տեղի այժմ ըստ այլազգակեացն կոչի ՂԱԶԸԼԻՔԻԼԻՍԱ»³⁹:

Մաքենցաց վանքը մեծ համբաւ է ձեռք բերում Սողոմոն վարդապետ Գառնեցու վանահայրության տարիներին, 760-ական թվականներին: 8-րդ դարի վերջին տասնամյակում վանքը կորցնում է իր նախկին փայլը, քանի որ՝ «Եւ վասն զի ի ժամանակըս Սողոմոնի՝ հարանց հօր, յերկուս լինէր բաժանեալ ուխտն մաքենցաց, և հայրն հարանց հասարակ բաժնի կրօնաւորական դասուն երթեալ բնակէր ի Զրեակ որ ի Ծիրակ գաւառի՝ զհետ նորա և այս ևս Սողոմոն չուէր գնայր: Եւ անդ ի միայնակեցի կարգ ելեալ լինէր ի խրճիթ՝ բազում ճգանց և աշխատութեանց զանձն առեալ»⁴⁰:

Հալածվելով արաբ ոստիկաններից, Մաքենցաց վանքի վանականների մի մասը փախչում է Ծիրակի ա. Զրեակ ուխտ, իսկ մյուս մասը՝ Աղվանք, և ապաստանում է Միհր-Ներսէսի կամ Զրվշտիկ վանքում: Այնուհետև պատմության մեջ չենք հանդիպում, որ Սողոմոնը վերադարձած լինի իր սիրելի դաստակերտ: Ը դարի առաջին քառորդին Աղվանքի տեղ Միքայել կաթողիկոսը «իր մոտ

կանչեց մաքենացիների վանահայր Սողոմոնին ու անհիծեց Աղվանքի իշխաններին, որոնք ամուսնացել էին իրենց եռագորտ ազգականների հետ, և որոնց անմիջապես պատիժ վրա հասավ ու ոչնչացան: Սրանց հետ նգովեցին նաև վրաց Թալիլե սուաչ-նորդին, որովհետև անօրեն ամուսնության հրաման էր տալիս»⁴¹:

Մաքենցաց վանքը հիմնահատակ կործանում է խուռամյանների առաջնորդ Բաբիկը՝ «Բաբան պարսիկ», 828 թվականին: Միևիթար Այրիվանեցին իր պատմության 51-րդ էջում գրում է այդ մասին. «719... Բաբան զՄաքենացոյ սուրբ ուխտն այրեաց»: Իսկ Օրբելյանը գրում է. «Իսկ ի գալ ամին գնաց Բաբան ի գաւառն Գեղարքունոյ և Էարկ ի սուր սուսերի զբնակչսն ոգիք իբրև 15000, և զյոզնապայծառ մեհարանն և զհոչակելի ուխտն մաքենցաց յաւարի առեալ զամենայն ստացուածըն՝ այրեաց և քանդեաց զամենայն շինուածն»⁴²: Հ. Ղ. Ալիշանը, քննադատելով Օրբելյանի գրածը, հաստատում է. «Սողոմոնի այսր բարոյ դիպումս՝ չար մեծ հանդիպի վանացս մաքենցաց, որպէս և այլոց կողմանց Գեղամայ և Սիւնեաց, զոր խառնակ իմն պատմէ Օրբելեանն. որպէս և այլոր յիշեցաք. զերկուս նմա դէպս ի մի ձուլելով զՄոթանայն և զԲաբանայ: Առաջինն էր անուանի ոստիկանն՝ (յետոյ ամիրապետ), որ յամի 734 առաքեցաւ ի Հայս և ի հոնս. Օրբելեանն (սաւ յամի 727) «ելանէ... աշխարհաւերն ՄՐՎԱՆ քազում զօրօք ի Հայս» և իբրև հուր սաստիկ այրեաց և հրդեհեաց «զգեղեցկութիւն աշխարհիս» և ընդդէմ սորա աւէ վասակայ Սիւնեաց նահապետի ամեալ զԲաբանն պարսիկ, որ յետոյ ուրեմն յամի 821 եկեալ է. իսկ զարդիս ոչ է յայտ յոյր ձեռն եհաս վնասն, այլ ստոյգ է պատմեալ աւերումն վանացն»⁴³:

Մաքենցաց վանքն իր վերածնունդն է ապրում 9-րդ դարի երկրորդ կեսից, երբ Գեղարքունիքի գահակալ իշխան է դառնում Վասակ-Գաբուրի ավագ որդին՝ Գրիգոր-Սուրբան 2-րդը: Այս մասին հրստակ վկայում է Օրբելյանը. «Եւ տեղին անբնակ մնայր. ապա յառորս Գրիգորի՝ Սիւնեաց Տաւուն, որ Սուրբան կոչեցաւ, վերստին նորոգեցաւ և շինեցաւ մեծ եկե-

³⁷ Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 66:

³⁸ Մ. վրդ. Մուրադյան, «Պատմութիւն Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ», Երուսաղեմ, 1872, էջ 317—318:

³⁹ Հովհ. եպս. Ծախաթունյան, Բ. Բ, էջ 254:

⁴⁰ Հովհ. կաթողիկոս Դրասխանակերտցի, «Պատմութիւն», էջ 110—111: Այս հարցի մասին վկայում են նաև՝ Օրբելյան, «Պատմութիւն», էջ 159. Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 67:

⁴¹ Մովսէս Կաղանկատվացի, «Պատմութիւն Աղվանից աշխարհի», էջ 269—270:

⁴² Ստ. արքեպ. Օրբելյան, «Պատմութիւն», էջ 159:

⁴³ Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 66—67:

ղեցին, և պայծառացուց առանել քան զառանել»⁴⁴:

Մաքենոցաց վանքն իր գոյությունը շարունակում է մահ 15—16-րդ դարում:

Վանքը մերթ աչիհանալով, մերթ վերագարթոնք ապրելով, շարունակում է իր գոյությունը մինչև 1878 թվականը, երբ նորբայազետցիք մտածում են Մաքենոցաց վանքը վերանորոգել որպես ուխտատեղի, վանական դպրոց բանալ՝ այդ շրջանների համար քահանայացուներ պատրաստելու: Այդ իսկ նպատակով ս. Էջմիածնի Սինդի որոշումով նորբայազետցի Հովհաննես աչրիացյալ քահանան վեղար է ստանում ու նշանակվում մույն վանքի վանահայր: Ըր-

ջանի ժողովուրդը հետզհետե սկսում է օժանդակել վերանորոգելու դարավոր ու պատմական մեմաստանը: Վերակառուցում են միաբանական սենյակները, սակայն տեղի թուրքերը խանգարում են այդ բոլորը, և վանքը նորից լքվում, համարյա թե ամայանում է⁴⁵:

Այսօր Մաքենոցաց վանքը կանգուն է ու կարող վերանորոգության, թաղակապ (սագաշեն) մատուցելով հանդերձ: Մնացել են մահ պարիսպներից որոշ հետքեր:

Ստորև ներկայացնում ենք Մաքենոցաց վանքի վանահայրերի Գավազանագիրքը, որն, իհարկե, ամբողջական չէ:

ՄԱՔԵՆՈՑԱՑ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿԸ

Թվականը Ամուսնություն

Աղբյուրները

701	Սողոմոն Հարանց Հայր
791	Սողոմոն կաթողիկոս
844	Ստեփաննոս վանական
854	Հովհաննես Դ կաթողիկոս
874	Մաշտոց, ապա կաթողիկոս
1275	Հովհաննես վարդապետ
1285	Աթանաս եպիսկոպոս
1295	Գրիգոր եպիսկոպոս
1498	Սարգիս վարդապետ
1499	Թադևոս եպիսկոպոս
1502	Մելիքսեդ եպիսկոպոս, որդի Միրզին
1657	Գրիգոր վարդապետ
1666	Խաչատուր վարդապետ Զուղայեցի, վերանորոգողն Մաքենոցաց վանքի
1693	Ավետիս վարդապետ
1878	Հովհաննես շուշտակ վարդապետ Նոր-Բայազետցի

Միսիթար Այրիվանեցի, «Պատմություն», էջ 51:
Մ. արք. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 576:
Ստ. արք. Օրբելյան, ԼԷ 173, 208:
Հով. կաթող. Դրասխանակերտցի, էջ 126—127:
Մ. արք. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 576:
Մ. արք. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 576:
Նույն տեղում
Նույն տեղում
Լ. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, Երևան, 1967, էջ 261:
Նույն տեղում, էջ 283:
Ըստ արձանագրությանց Մաքենոցաց վանքի:
Նույնը
Նույնը
Նույնը
Մ. արք. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 577:
(Շարունակելի)

⁴⁴ Ստ. արքեպ. Օրբելյան, «Պատմություն», էջ 159:

⁴⁵ Մ. արքեպ. Սմբատյան, «Գեղարքունի», էջ 577: